Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-161-28.11.2012-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ընդերքի մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-280-Ն օրենսգրքի 80-րդ հոդվածի 7-րդ մասում «ապօրինի» բառը փոխարինել «առանց թույլտվության իրականացրած» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի ապրիլի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Ընդերքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Այվազյան ՀՀ ԱԺ պատգամավոր Խ. Հարությունյան ՀՀ ԱԺ պատգամավոր Մ. Սարգսյան ՀՀ ԱԺ պատգամավոր Մ. Գրիգորյան	Առաջարկվում է նախագծից հանել 1-ին հոդվածը՝ անհատ ձեռնարկատերերին չտրամադրելով ընդերքօգտագործողի կարգավիճակ:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Այվազյան ՀՀ ԱԺ պատգամավոր Մ. Սարգսյան	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածով վերախմբագրվող՝ «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 80-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «7. Սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 12 ամսվա ընթացքում, ընդերքօգտագործման իրավունքը (լիցենզիա, պայմանագիր, լեռնահատկացման ակտ) վերաձևակերպելու նպատակով լիազոր մարմին չդիմելու դեպքում ընդերքօգտագործողի գործունեությունը համարվելու է առանց թույտվության իրականացրած գործունեություն, և կիրառվելու են պատասխանատվության միջոցներ:»:	Ընդունվել է մասնակի:	Նախագծով նախատեսվել է այլ մոտեցում, որպեսզի նախագիծն ուժի մեջ մտնի 2013 թվականի ապրիլի 1-ից և չտարածվի 2012 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:
ՀՀ ԱԺ պատգամավոր Խ. Հարությունյան	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածով վերախմբագրվող՝ «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 80-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ընդերքօգտագործման իրավունքը (լիցենզիա, պայմանագիր, լեռնահատկացման ակտ) մինչև 2013 թվականի ապրիլի 1-ը չվերաձևակերպելու դեպքում ընդերքօգտագործողի գործունեությունը համարվելու է առանց թույտվության իրականացրած գործունեություն, և կիրառվելու են պատասխանատվության միջոցներ:»:	Չի ընդունվել: Նախագծով նախատեսվել է այլ մոտեցում, որպեսզի նախագիծն ուժի մեջ մտնի 2013 թվականի ապրիլի 1-ից:	
ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Այվազյան	Առաջարկվում է նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը նախատեսել 2013 թվականի ապրիլի 1-ից:	Ընդունվել է:	Նախագծով նախատեսվել է, որ այն ուժի մեջ է մտնելու 2013 թվականի ապրիլի 1-ից:

ՀՀ ԱԺ պատգամավոր Խ. Հարությունյան	Առաջարկվում է նախագծի 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:»:	Ընդունվել է:	Նախագծով նախատեսվել է, որ այն ուժի մեջ է մտնելու 2013 թվականի ապրիլի 1-ից: